



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL
ORGANIZATION

Տեղեկանք

**Բարձրագույն դատական խորհրդի գործունեությունը որպես դատարանների
գործունեության իրական անկախության ցուցանիշ**

Սույն տեղեկանքը պատրաստված է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից 2018 թվականին:
Տեղեկանքում տեղ գտած մտքերն ու կարծիքներն օգտագործելիս խնդրում ենք պահպանել հղումը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ



Ընդհանուր տեղեկություն

1. 2018 թվականի փետրվարի 7-ին ընդունվել է ՀՀ Դատական օրենսգիրքը, որի շրջանակներում, ըստ նախատեսվածի, ձևավորվել է Բարձրագույն դատական խորհուրդը:
2. 2018 թվականի փետրվարի 27-ին ՀՀ Ազգային Ժողովում ընտրվել են բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամները¹:
3. 2018 թվականի մարտի 1-ին կայացել է ՀՀ դատավորների ժողովի հերթական տարեկան ընդհանուր ժողովը, որի շրջանակներում ընտրվել են Բարձրագույն դատական խորհրդի առաջին հինգ դատավոր անդամները²:
4. 2018 թվականի մարտի 5-ին կայացել է բարձրագույն դատական խորհրդի առաջին նիստը, որի շրջանակներում փակ, գաղտնի քվերակությամբ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ է ընտրվել Գագիկ Հարությունյանը³:

Բարձրագույն դատական խորհրդի դրսևորած անօրինականություններն ու լիազորությունների չարաշահումը

5. 2017 թվականի հունվարի 9-ին այդ ժամանակ գործող ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից ընդունվել է հրամանագիր՝ դատավորների թեկնածությունների ցուցակը հաստատելու և ՀՀ Նախագահի 2011 թվականի հուլիսի 23-ին ՆՀ-136-Ա հրամանագրում լրացումներ կատարելու մասին:
6. Հրամանագրով հաստատվել է մասնավորապես՝ ՀՀ ԱԽ 2016 թվականի դեկտեմբերի 21-ի Դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման մասին ԱԽ-29-Ո-27 որոշմամբ ներկայացված դատավորների

¹ Հետք, Բարձրագույն դատական խորհրդի անդամները ընտրվեցին. «Ելք»-ի վստահեցմամբ՝ արդյունքները կեղծվել են, 2018 թ., 28 փետրվար, <http://hetq.am/arm/news/86164/>

² Azatutyun.am, Հայտնի է Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմը, 2018 թ., 01 մարտ, <https://www.azatutyun.am/a/29071327.html>

³ Court.am, ՀՀ կայացել է բարձրագույն դատական խորհրդի առաջին նիստը, 2018 թ., 05 մարտի, <http://www.court.am/index.php?link=news/05-3-18/05-03-2018.htm>



թեկնածությունների ցուցակը և որոշվել է ՀՀ Նախագահի 2011 թվականի հուլիսի 23-ի Դատավորների թեկնածությունների ցուցակը հաստատելու մասին ՆՀ-136-Ա հրամանագրով հաստատված դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացման բաժիններում կատարել լրացումներ⁴:

7. Դատական օրենսգրքի համաձայն՝ ցուցակը ենթակա է ներկայացման ՀՀ Նախագահի հաստատմանը, և դրանում այլ փոփոխություններ մինչև Հանրապետության նախագահին ներկայացնելը չեն կարող իրականացվել:
8. 2018 թվականի մայիսի 3-ին նոր ձևավորված Բարձրագույն դատական խորհուրդը նշված ցուցակները հանրապետության նախագահին ներկայացնելու փոխարեն հանդիպում է ունեցել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների թեկնածուների հետ: Քննարկումներից հետո խորհուրդը հրավիրել է նիստ, և կազմակերպել է թեկնածուների անձի շուրջ նոր, գաղտնի քվեարկություն: Քվեարկության արդյունքներով որոշվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94 և 130-րդ հոդվածների, 166-րդ հոդվածի 29, 31 և 32-րդ մասերի հիմքով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահի թափուր պաշտոնում նշանակելու համար ՀՀ նախագահին ներկայացնել նույն դատարանի դատավոր Արսեն Սամվելի Մկրտչյանի թեկնածությունը:
9. Նույն կերպ, Բարձրագույն դատական խորհուրդը գաղտնի քվեարկության արդյունքներով որոշել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94, 127, 128, 129-րդ հոդվածների և 166-րդ հոդվածի 14-րդ մասի հիմքերով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի թափուր տեղում նշանակելու համար Հայաստանի Հանրապետության նախագահին ներկայացնել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Մարգարյանի թեկնածությունը, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորների թափուր տեղերում նշանակելու համար՝ Տիգրան Սիմոնյանի և Արսեն Նիկողոսյանի թեկնածությունները:
10. Բարձրագույն դատական խորհրդի նիստում **գաղտնի քվեարկություն է կազմակերպվել նաև արդեն հաստատված վարչական շրջանի դատավորների թեկնածուների անձի շուրջ, և քվեարկության արդյունքներով ՀՀ վարչական դատարանի դատավորների թափուր տեղերը զբաղեցնելու համար օրենքով սահմանված կարգով առաջադրված**

⁴Դատավորների թեկնածուների հաստատված ցուցակը քստհավելված 1-ի



երկու թեկնածուների թեկնածությունը ձայների մեծամասնությամբ մերժվել է⁵:

ԲԴԽ ՈՐՈՇՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

11. 2018 թվականի մայիսի 3-ի նիստում Խորհուրդը մերժել է վարչական դատարանի դատավորների թեկնածությունները՝ հիմքում դնելով Խորհրդի անդամների քվերակության արդյունքները, մինչդեռ նոր քվերակություն կազմակերպելու իրավասություն Բարձրագույն Դատական խորհուրդն ըստ էության չունի:

Կարող էր արդյոք Բարձրագույն դատական խորհուրդը կիրառել նոր ընդունված Դատական օրենսգրքի դրույթները արդեն իսկ հաստատված դատավորների թեկնածուների նկատմամբ

12. ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը ՀՀ Դատական հին օրենսգրքով հաստատված դատավորների թեկնածուների ցուցակի նկատմամբ կիրառել է Հայաստանի Հանրապետության նոր դատական օրենսգրքի 94, 127, 128, 129-րդ հոդվածները և 166-րդ հոդվածի 14-րդ մասը՝ իրեն վերագրելով արդեն հաստատված ցուցակում փոփոխություն իրականացնելու լիաորություն:

13. Այսպես, ինչպես ներկայացվեց, դեռևս 2017 թվականի հունվարի 9-ին ՀՀ նախագահի կողմից հաստատված է եղել դատավորների թեկնածուների ցուցակը: Ինչը այդ պահին գործող Դատական օրենսգրքի համաձայն նշանակել է, որ դատավորների ընտրության և նշանակման ընթացակարգը ավարտված են եղել: Այդ պահին գործող օրենսդրության համաձայն՝ դատավորի թեկնածուները Արդարադատության ակադեմիայում պետք է 9 ամիս ուսում անցնելուց հետո թափուր տեղեր առաջանալիս ստանալին Արդարադատության Խորհրդի առաջարկությունը՝ թափուր տեղը զբաղեցնելու վերաբերյալ:

14. 2007 թվականի Դատական օրենսգրքի 123-րդ հոդվածի 9-րդ մասի /ուժը կորցրել է 2018 թվականի ապրիլի 9-ին նոր դատական օրենսգիրքը ուժի մեջ մտնելու հիմքով/՝ *Թեկնածուի համաձայնության դեպքում վճարել կատարանի նախագահը նրա թեկնածությունը ներկայացնում է Արդարադատության խորհրդին: Արդարադատության խորհուրդը*

⁵ Ծանոթագրություն: ԲԴԽ նիստին ներկա չի գտնվել Արսեն Նիկողոսյանը՝ գործուղման մեջ լինելու պատճառով, սակայն վերջինիս համար իրականացվել է քվերակություն և նա ստացել է անդամների կողմ ձայները, <http://court.am/index.php?link=news/4-5-18/4-5-18.htm>



ներկայացրած թեկնածության վերաբերյալ բաց քվեարկությամբ տալիս է դրական եզրակացություն, եթե խախտված չեն սույն օրենսգրքով սահմանված ընթացակարգերը: Թեկնածությունը խորհրդի դրական եզրակացության դեպքում ներկայացվում է ՀՀ Նախագահին:

15. Նմանատիպ դրույթ նախատեսված է նաև 2018 թվականի Դատական օրենսգրքով: Այսպես, համաձայն 117-րդ հոդվածի 1-ին մասի՝ *Թեկնածուի համաձայնության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը նրա թեկնածությունն առաջարկում է Հանրապետության նախագահին՝ ներկայացնելով նաև նրա անձնական գործը, թեկնածուի դատավոր չլինելու դեպքում նրա կողմից ներկայացված և դրանց ստուգման արդյունքում ձեռք բերված փաստաթղթերը:*
16. 2018 թվականի Դատական օրենսգրքի Գլուխ 22-ով նախատեսված Եզրափակիչ և Անցումային Դրույթների 166-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ *«Մինչև Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրը Հանրապետության նախագահի կողմից հաստատված դատավորների թեկնածությունների ցուցակը սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո պահպանում է իր ուժը...»:* Այս նորմը նպատակ է հետապնդել ապահովելու արդեն հաստատված ցուցակի նկատմամբ կամայական մոտեցումները:
17. *Այսինքն ստացվում է, որ օրենքի ուժով՝ թափուր տեղ առաջանալու դեպքում համապատասխան թեկնածուին արվում է գրավոր առաջարկություն և եթե վերջինս տալիս է իր գրավոր համաձայնությունը ԲԴԽ նրա թեկնածությունը ներկայացնում է երկրի նախագահին: Ավելին, օրենսգիրքը չի նախատեսում, որ ԲԴԽ պետք է կամ կարող է հանդիպում ունենալ թեկնածուի հետ: Վերջինիս թեկնածությունը երկրի նախագահին ներկայացնելու միակ նախապայմանը դատավորի թափուր տեղը զբաղեցնելու վերաբերյալ թեկնածուի համաձայնությունն է:*
18. Մինչդեռ, Բարձրագույն դատական խորհուրդը կամայական կերպով՝ արդեն իսկ հաստատված դատավորների ցուցակի նկատմամբ կիրառել է 2018թ ընդունված Դատական օրենսգրքի դրույթները, հաստատված ցուցակի դատավորի թեկնածուների գրավոր համաձայնությունը ստանալուց հետո վերջիններիս հրավիրել է հանդիպման, կրկին անգամ ենթարկել ստուգման և անհասկանալի պատճառներով “գաղտնի” քվեարկությամբ դեմ քվեարկել վարչական մասնագիտացման բաժնի դատավորների թեկնածուների թեկնածությունը երկրի նախագահին ներկայացնելուն:



Բարձրագույն դատական խորհրդի ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընտրված կազմը և դատավորների նոր թեկնածուների շուրջ քվեարկության կազմակերպումը

19. Դատական օրենսգրքի նախագծի տեքստը կազմող աշխատանքային խմբում է եղել ԲԴԽ անդամներից մեկը՝ Գևորգ Դանիելյանը, ինը ենթադրում է, որ ԲԴԽ լիազորությունների ընդլայնված շրջանակը նախատեսող կազմը ի սկզբանե նախատեսել է նման ընդլայնված լիազորությունների շրջանակը: Այս հանագամանքն այնուամենայնիվ, հակառակ մեջ է դատարանների անկախության ապահովման սահմանադրական պահանջի հետ:

ՌԻՍ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՉԻ ԱՐԺԱՆԱՑԵԼ ԲԴԽ ԿՈՂՄԻՑ

20. ԲԴԽ նիստի և ընդունված որոշման վերաբերյալ առկա հրապարակային տեղեկության և ցուցակի մասին տեղեկություններից պարզ է դառնում, որ դեմ են քվեարկել միայն վարչական դատարանի դատավորի 2 թեկնածուի թեկնածությունը⁶:

21. Ուսումնասիրելով նույն ցուցակի **քաղաքացիական և քրեական** մասնագիտական բաժինների թեկնածուների տվյալները /ըստ հավելվածի/, կարող ենք արձանագրել էական նշանակություն ունեցող մի հանգամանք. Ցուցակի քաղաքացիական և քրեական մասնագիտացման բաժնի հստատված թեկնածուները հանդիսացել են բացառապես **դատախազության, ոստիկանության և դատական իշխանության ներկայացուցիչներ**, որոնք գործել են նախորդ կառավարության և իշխանության գործունեություն շրջանակներում: Վարչական մասնագիտացման բաժնի թեկնածու, Խորհրդի հավանությունը չստացած Ռուզաննա Ագրոյանը միակն է, որը եղել է **փաստաբան և չի ներկայացրել վերը նշված կառույցներից որևէ մեկը, այսինքն նախկին իշխանության և համակարգի մաս չի կազմել:**

22. Ավելին, ԱԽ նույն այդ ցուցակով արդեն իսկ նշանակվել են դատավորներ, սակայն վարչական դատարանի դատավորի թեկնածուների նշանակումը ինչ-ինչ պատճառներով դեռևս 2017 թվականի հոկտեմբերից /թափուր տեղը առաջանալու պահ՝ հիմք <http://www.president.am/hy/decrees/item/4138/> հետաձգվել է և քննության

⁶<http://court.am/index.php?link=news/4-5-18/4-5-18.htm>



առարկա է դարձել միայն 2018 թվականի մայիսին՝ Դատական նոր օրենսգիրքը ուժի մեջ մտնելուց և ԲԴԽ ստեղծվելուց հետո⁷:

- 23. Վարչական մասնագիտացմամբ դատավորների թեկնածուների ցուցակում պահպանվել է ՀՀԿ պատգամավոր Ռուստամ Մախմուդյանի թեկնածությունը այն պարագայում, երբ ՀՀ Դատական օրենսգրքի 159-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքական գործունեություն իրականացնելու հիմքով⁸ նրա թեկնածությունը պետք է հանվեր ցուցակից: Ակնհայտ է դառնում, որ դեռևս 2017 թվականի հոկտեմբերից վարչական դատարանում դատավորի թափուր տեղ առկա լինելու պարագայում առաջարկություն չի արվել որևէ թեկնածուի, քանի որ այդ պահին գործող օրենսդրական կարգավորումների համաձայն Ռուստամ Մախմուդյանը կլքեր դատավորի թեկնածուների ցուցակը:
- 24. 2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ մտած ՀՀ Դատական օրենսգրքում իրականացվել են փոփոխություններ, և **պատգամավոր ընտրված լինելու հիմքը դատավորի թեկնածուին ցուցակից հանելու համար վերացվել է:** Այսինքն՝ վարչական մասնագիտացմամբ դատավորների թեկնածուների ցուցակի առաջին հերթում գտնվող անձանց մերժելով՝ ԲԴԽ-ն առաջ է քաշում հաջորդ հերթի թեկնածուներին, այդ թվում նաև ՀՀԿ պատգամավոր Ռուստամ Մախմուդյանին:

ԻՆՉՈՒ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՉԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ ՀԱՏԿԱՊԵՍ
 ՎԱՐՉԱԿԱՆԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ
 ԹԵՎՆԱԾՈՒՆԵՐԸ?

- 25. Դատավորների թեկնածությունը մերժելու հնարավոր և ողջամիտ բացատրություններից մեկը ԲԴԽ կողմից **նոր դատավորներին հսկողության տակ պահելն է:** Հաշվի առնելով ԲԴԽ ձևավորման ընթացակարգն ու կազմը՝ նման բացատրությունը լիովին արդարացված է համարվում: Այսպես, Խորհրդի անդամները ԱԺ-ում ընտրվել են Հայաստանի Հանրապետական կուսակցության խմբակցության ներկայացմամբ, իսկ դատավոր անդամների ցուցակը կազմվել է կրկին ՀՀԿ

⁷Նշված ցուցակից դատավորներ են նշանակվել Ալֆրեդ Վարդանյանը /քաղ.մասնագիտացմամբ/, Արման Հովհաննիսյանը, Գործահրապյանը, Վահե Միսակյանը, Հարություն Մանուկյանը /քրեական մասնագիտացմամբ/, <http://www.president.am/hy/decrees/item/4167/>, <http://www.president.am/hy/decrees/item/4415/>

⁸<http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=1198>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL
ORGANIZATION

ներգրավվածությամբ, ինչը խոսում է այս կուսակցության կողմից դատական իշխանության և հատկապես նոր նշանակվող դատավորների նկատմամբ վերահսկողություն պահպանելու մասին:

26. Հատկանշական է, որ ԲԴԽ ներկայիս կազմի 2 անդամները՝ **Սերգեյ Չիչոյան և Արմեն Խաչատրյան**, հանդիսացել են նաև Արդարադատության Խորհրդի անդամներ, և ԱԽ կողմից դատավորների թեկնածուների ցուցակը հաստատվել, ներկայացվել է նախագահին դեռևս 2016 թվականին: **Մինչդեռ նույն այդ անդամները ԲԴԽ կազմում դեմ են քվեարկել իրենց իսկ կողմից կողմ քվեարկած նույն թեկնածուներին:**
27. Այս առումով մտահոգիչ է, որ ՀՀ Վարչական դատարանի նկատմամբ հնարավոր վերահսկողության սահամանումը կարող է պայմանավորված լինել նաև առաջիկայում սպասվող ընտրական գործընթացներով, քանի որ **ընտրական գործընթացների վերաբերվող հարցերը և վեճերը քննության առարկա են դառնում վարչական դատարաններում:**